



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԽՈՐՀՐԴԻՆ ԱՌԸՆԹԵՐ
ԳԻՏԱՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԿԱՐԾԻՔ
(AMICUS CURIAE) № 15/19**

15.08.2019թ.

ք. Երևան

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի (**այսուհետ՝ Պալատ**) խորհրդին առընթեր գիտավերլուծական կենտրոնը (**այսուհետ՝ Կենտրոն**)՝ քննարկելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 62-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանության՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց՝

«Սոգլասիե-Արմենիա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (ներկայացուցիչ փաստաբաններ՝ Հայկ Եգանյան, Աշոտ Աբրահամյան, այսուհետ՝ Դիմող) 30. 05. 2019թ. որոշմամբ դիմելով ՀՀ սահմանադրական դատարան, խնդրել է որոշել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 62-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանության՝ ՀՀ Սահմանադրության 1-ին, 3-րդ, 10-րդ, 60-րդ, 78-րդ, 79-րդ հոդվածներին համապատասխանության հարցը:

Ըստ Դիմողի դիրքորոշման՝ վիճարկվող դրույթի՝ իրավակիրառական պրակտիկայում տրված մեկնաբանության պատճառով խախտվել է ընկերության սեփականության սահմանադրական իրավունքը:

Ըստ Դիմողի՝ վիճարկվող դրույթը վերաքննիչ դատարանի կողմից կիրառվել է այն մեկնաբանությամբ, ըստ որի՝ քանի որ անձին սեփականության իրավունքից զրկելու բացառիկ լիազորությունը պատկանում է դատարանին, ուստի պետական իշխանության որևէ այլ մարմին իրավասու չէ կայացնելու որևէ որոշում, կամ իրականացնելու որևէ գործառույթ, որը կգրկի անձին սեփականության իրավունքից: Վերաքննիչ վարչական դատարանը համապատասխան վարչական ակտի կայացումը Երևանի քաղաքապետի կողմից դիտել է «*ակնառու կոպիտ սխալ*» եզրույթի շրջանակներում՝ արձանագրելով, որ այն կայացվել է ոչ իրավասու մարմնի կողմից, ինչն էլ հիմք է հանդիսացել վարչական ակտն առոչինչ ճանաչելու համար: Վերաքննիչ վարչական դատարանը, ըստ Դիմողի, փորձել է ակնառու կոպիտ սխալի առկայությունը հիմնավորել սահմանադրական համապատասխան նորմերը մեկնաբանելու միջոցով՝ արդյունքում տալով խնդրո առարկա դրույթին նոր բովանդակություն:

Դիմողի դիրքորոշմամբ՝ իրավակիրառ մարմինների մեկնաբանությունների համեմատությունների արդյունքում ակնհայտ է դառնում, որ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 62-րդ հոդվածի 1-ին մասի «բ»

կետին իրավակիրառական պրակտիկայում տրվել են տարբեր մեկնաբանություններ, ինչի արդյունքում խախտվել են իրավական որոշակիության համաչափության սկզբունքները՝ հանգեցնելով ընկերության սեփականության իրավունքի խախտանք:

Վկայակոչելով սահմանադրաիրավական այն կանոնակարգումը, ըստ որի՝ սեփականության իրավունքից զրկումը պետք է իրականացվի դատական կարգով, վարչական դատարանը գտել է, որ այն իրավիճակը, երբ Երևանի քաղաքապետն իրավասու չի եղել ընդունելու խնդրո առարկա հողամասը օտարելու որոշում, ըստ էության վերաբերում է այդ որոշման վավերությանը, իսկ վերաքննիչ վարչական դատարանն արձանագրել է, որ այն իրավիճակը, երբ Երևանի քաղաքապետն իրավասու չի եղել ընդունելու խնդրո առարկա հողամասը օտարելու որոշում, վերաբերում է վարչական ակտն առոչինչ ճանաչելու հետ կապված իրավակարգավորումներին:

Քննարկվող դրույթի շրջանակներում Դիմողը գտնում է, որ խոսքը վերաբերում է բացառապես իրավասու կամ ոչ իրավասու **վարչական մարմիններին**: Իսկ եթե իրավասու սուբյեկտի հարցը, դուրս գալով վարչական մարմինների շրջանակից, քննարկվում իշխանության այլ թևերի ինստիտուտների համատեքստում, ակնհայտ է, որ իրավակիրառ մարմինն առանց համապատասխան մեկնաբանության չի կարող քննարկել իշխանության այլ ճյուղը ներկայացնող մարմնի ոչ իրավասու սուբյեկտ լինելը: Այս համատեքստում քննարկման առարկա են դառնում իշխանության տարբեր թևեր ներկայացնող ինստիտուտների գործառության, ինստիտուտցիոնալ առանանձահատկությունները, հետևաբար, առանց համապատասխան մեկնաբանության՝ հնարավոր չէ դրանց ոչ իրավասու սուբյեկտ համարել:

Դիմողի դիրքորոշմամբ՝ վիճարկվող դրույթին վարչական վերաքննիչ դատարանի կողմից տրված մեկնաբանության արդյունքում խախտվել է ընկերության սեփականության իրավունքը, իրավական որոշակիության սկզբունքը, չեն ապահովվել համաչափության սկզբունքին վերաբերող սահմանադրաիրավական կարգավորումները: Վերաքննիչ վարչական դատարանի՝ վիճարկվող դրույթին տրված մեկնաբանության արդյունքում, ըստ Դիմողի, խախտվել է նաև համաչափության սահմանադրական սկզբունքը, քանի որ ընտրված միջոցը՝ ի դեմս վարչական ակտն առ ոչինչ ճանաչելու իրավական ռեժիմի, պիտանի և անհրաժեշտ չի եղել Սահմանադրությամբ սահմանված նպատակին հասնելու համար, համարժեք չի եղել սահմանափակվող հիմնական իրավունքի և ազատության նշանակությանը:

Ելնելով վերոգրյալից՝ Դիմողը խնդրել է որոշել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 62-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետին իրավակիրառական պրակտիկայում տրված մեկնաբանության՝ Սահմանադրության 1-ին, 3-րդ, 10-րդ, 60-րդ, 78-րդ, 79-րդ հոդվածներին համապատասխանության հարցը:

ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐ

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի վիճարկվող 62-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի համաձայն՝

1. Առ ոչինչ է այն վարչական ակտը, որում առկա են, մասնավորապես՝ հետևյալ ակնառու կոպիտ սխալները.

բ) ակտն ընդունել է ոչ իրավասու վարչական մարմինը.:

Վիճարկվող դրույթի իրավակիրառական պրակտիկայում տրված մեկնաբանության սահմանադրականությունը գնահատելու համար, Կենտրոնը գտնում է, որ անհրաժեշտ է քննարկման առարկա դարձնել վարչական ակտի ոչ իրավաչափության և դրա վիճարկման կամ անվավեր ճանաչման հետ կապված որոշ օրենսդրական կարգավորումներ: Այսպես.

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի վիճարկվող 62-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի իմաստով՝ ոչ իրավասու **վարչական մարմնի** կողմից ակտն ընդունելը վարչական ակտի **առ ոչինչ լինելու հիմք է:**

Ընդ որում, **նույն օրենքի 62-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Առ ոչինչ վարչական ակտն ընդունման պահից իրավաբանական ուժ չունի և ենթակա չէ կատարման կամ կիրառման:**

Օրենքի 63-րդ հոդվածը տարբերում է առ ոչինչ չհանդիսացող ոչ իրավաչափ վարչական ակտն առ ոչինչ հանդիսացող վարչական ակտից՝ նշված հոդվածում սահմանելով առ ոչինչ չհանդիսացող ոչ իրավաչափ վարչական ակտն անվավեր ճանաչելու հիմքերը:

Հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ... ոչ իրավաչափ վարչական ակտը կարող է անվավեր ճանաչվել այդ ակտն ընդունող վարչական մարմնի կամ դրա վերադաս մարմնի կողմից, ինչպես նաև դատական կարգով:

Այսինքն՝ առ ոչինչ հանդիսացող վարչական ակտն անվավեր է ընդունման պահից, ի տարբերություն առ ոչինչ չհանդիսացող վարչական ակտի՝ որն անվավեր է ճանաչվում վարչական մարմնի կամ դրա վերադաս մարմնի կողմից, ինչպես նաև դատական կարգով:

Ընդ որում ՀՀ վարչական դատավարության օրենսգիրքը, կախված ոչ իրավաչափ վարչական ակտի առ ոչինչ կամ այդպիսին չհանդիսանալու հանգամանքից, տարբերակում է հայցերի առանձին տեսակները: Այսպես.

Համաձայն ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 69-րդ հոդվածի 2-րդ մասի՝

2. *Ճանաչման հայցով հայցվորը կարող է պահանջել ճանաչել վարչական ակտի առ ոչինչ լինելը:*

Համաձայն ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի՝

1. *Վիճարկման հայցով հայցվորը կարող է պահանջել ամբողջությամբ կամ մասնակիորեն վերացնել միջամտող վարչական ակտը (ներառյալ՝ զուգորդվող վարչական ակտի միջամտող դրույթները):*

Այսինքն՝ գործող օրենսդրությունը, ի թիվս այլնի, տարբեր դատավարական իրավակարգավորումներ է նախատեսել նաև՝ կախված վարչական ակտի առ ոչինչ հանդիսանալու կամ չհանդիսանալու հանգամանքից:

Ուստի, ոչ իրավաչափ վարչական ակտի անվավերության հիմքերի տարբերակումը կարևոր նշանակություն ունի կիրառման ենթակա իրավակարգավորումների շրջանակը ճիշտ որոշելու համար, ինչն իր հերթին կարևոր է անձի արդյունավետ դատական պաշտպանության իրավունքի ապահովման տեսանկյունից:

Ինչպես արդեն նշվեց, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի վիճարկվող 62-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի իմաստով՝ ոչ իրավասու **վարչական մարմնի** կողմից ակտն ընդունելը վարչական ակտի **առոչնչության հիմք է:**

Վիճարկվող հոդվածի ճիշտ կիրառման համար անհրաժեշտ է բացահայտել վարչական մարմինների հասկացությունը, քանի որ հոդվածում խոսքը վարչական ակտն ընդունող ոչ իրավասու վարչական մարմինների մասին է:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածում տրված է վարչական մարմինների հասկացությունը, համաձայն որի՝

1. Սույն օրենքում օգտագործվող հիմնական հասկացություններն են՝

1) վարչական մարմիններ՝

ա) Հայաստանի Հանրապետության գործադիր իշխանության հանրապետական մարմիններ՝ Հայաստանի Հանրապետության նախարարություններ, ինչպես նաև Հանրապետության ողջ տարածքում վարչարարություն իրականացնող պետական այլ մարմիններ.

բ) տարածքային կառավարման մարմիններ՝ մարզպետներ.

գ) տեղական ինքնակառավարման մարմիններ՝ համայնքի ավագանի և համայնքի ղեկավար.:

Օրենքի 3-րդ հոդվածի և 62-րդ հոդվածի համակարգային վերլուծությունը ցույց է տալիս, որ օրենսդիրը հստակ և որոշակի կերպով կարգավորել է վարչական ակտն առ ոչինչ ճանաչելու հիմքերը՝ որպես այդպիսին, ի թիվս այլնի, սահմանելով ոչ իրավասու **վարչական մարմնի** կողմից կայացված լինելը, իսկ 3-րդ հոդվածում հստակ թվարկել է վարչական մարմինների շրջանակը: Նշված իրավակարգավորումներում խոսք չի գնում ո՛չ դատական ակտերի, ո՛չ էլ դատական մարմինների մասին:

Ուստի, Կենտրոնը գտնում է, որ սահմանադրական դատարանում քննվող սույն գործով վարչական վերաքննիչ դատարանի կողմից սխալ է մեկնաբանվել վիճարկվող դրույթը, ինչը հազնեցրել է Դիմողի սահմանադրական իրավունքի խախտման:

Օրենսդրական կարգավորումների տարակերպ մեկնաբանությունն ու կիրառումն իրավակիրառական պրակտիկայում առաջին հերթին խախտում է իրավական որոշակիության սահմանադրական սկզբունքը, որն իր ամրագրումն է գտել ՀՀ Սահմանադրության 79-րդ հոդվածում:

Համաձայն ՀՀ Սահմանադրության 79-րդ հոդվածի՝

Հիմնական իրավունքները և ազատությունները սահմանափակելիս օրենքները պետք է սահմանեն այդ սահմանափակումների հիմքերը և ծավալը, լինեն բավարար չափով որոշակի, որպեսզի այդ իրավունքների և ազատությունների կրողները և հասցեատերերն ի վիճակի լինեն դրսևորելու համապատասխան վարքագիծ:

ՀՀ սահմանադրական դատարանն իր պրակտիկայում բազմիցս անդրադարձել է **լեգիտիմ ակնկալիքների հանդեպ հարգանքի** սկզբունքին:¹

«Իրավական որոշակիության, իրավական անվտանգության և օրինական ակնկալիքների իրավունքի պաշտպանության սկզբունքները հանդիսանում են իրավական պետության ու իրավունքի գերակայության երաշխավորման անբաժանելի տարրերը: Սահմանադրական դատարանը 2006թ. ապրիլի 18-ի ՍԴՈ-630 որոշման մեջ, մասնավորապես, արձանագրել է, որ «...օրենքը պետք է համապատասխանի նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի մի շարք վճիռներում արտահայտված այն իրավական դիրքորոշմանը, համաձայն որի՝ որևէ իրավական նորմ չի կարող համարվել «օրենք», եթե այն չի համապատասխանում

¹ Տե՛ս, օրինակ, ՀՀ սահմանադրական դատարանի 04.05.2010 թիվ ՍԴՈ-881, 09.09.2008 թիվ ՍԴՈ-758 որոշումները:

իրավական որոշակիության (*res judicata*) սկզբունքին, այսինքն՝ ձևակերպված չէ բավարար աստիճանի հստակությամբ, որը թույլ տա քաղաքացուն դրա հետ համատեղելու իր վարքագիծը»: Առավել ևս իրավունքի գերակայության սկզբունքի որդեգրման շրջանակներում օրենքում ամրագրված իրավակարգավորումները պետք է **անձի համար կանխատեսելի դարձնեն իր իրավաչափ սպասելիքները**: Բացի դրանից, իրավական որոշակիության սկզբունքը, լինելով իրավական պետության հիմնարար սկզբունքներից մեկը, ենթադրում է նաև, որ իրավահարաբերությունների բոլոր սուբյեկտների, այդ թվում՝ իշխանության կրողի գործողությունները պետք է լինեն կանխատեսելի ու իրավաչափ»:²

Վերը նշված սահմանադրական կարգավորումների և ՀՀ սահմանադրական դատարանի դիրքորոշումների լույսի ներքո ստացվում է, որ քննարկվող իրավակարգավորմանը տրված մեկնաբանություններն իրավակիրառական պրակտիկայում իրենց տարակերպության և անհստակության պատճառով անձի համար անկանխատեսելի են դարձնում սեփականության իրավունքի իրականացման իր իրավաչափ սպասելիքները: Այլ կերպ ասած՝ վարչական ակտի հասցեատիրոջ համար, իրավակիրառական պրակտիկայում օրենքի մեկնաբանման անորոշության պատճառով անկանխատեսելի է դառնում սեփականության հանդեպ իր լեզվի մեջ ակնկալիքը, որը բխում է վարչական ակտից:

Ընդ որում, իրավական որոշակիության սկզբունքին անհամապատասխանությունը հանգեցնում է նաև սեփականության սահմանադրական իրավունքի խախտման: Ուստի, սույն գործով վեճի առարկա իրավադրույթները քննության առարկա պետք է դարձվեն նաև սեփականության իրավունքի ճանաչման, երաշխավորման և պաշտպանության սահմանադրական մոտեցումների տեսանկյունից:

Հոդված 60. Սեփականության իրավունքը

1. Յուրաքանչյուր ոք ունի օրինական հիմքով ձեռք բերած սեփականությունն իր հայեցողությամբ փրկապետելու, օգտագործելու և փոփոխելու իրավունք:

2. Ժառանգելու իրավունքը երաշխավորվում է:

3. Սեփականության իրավունքը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ հանրության շահերի կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով:

4. Ոչ ոք չի կարող զրկվել սեփականությունից, բացառությամբ դատական կարգով՝ օրենքով սահմանված դեպքերի:

5. Հանրության գերակա շահերի ապահովման նպատակով սեփականության օտարումն իրականացվում է օրենքով սահմանված բացառիկ դեպքերում և կարգով՝ միայն նախնական և համարժեք փոխհատուցմամբ:

...

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» **Եվրոպական Կոնվենցիայի 11-րդ արձանագրության 1-ին հոդվածի** համաձայն՝

Յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձ ունի իր գույքից անարգել օգտվելու իրավունք: Ոչ ոքի չի կարելի զրկել նրան գույքից, բացառությամբ ի շահ

² ՀՀ սահմանադրական դատարանի 02.04.2014թ. թիվ ՍԴՈ-1142 որոշումը:

հանրության և այն պայմաններով, որոնք նախատեսված են օրենքով ու միջազգային իրավունքի ընդհանուր սկզբունքներով:

Սեփականության իրավունքի տարրերը հանդիսացող տիրապետման, օգտագործման, տնօրինման քաղաքացիաիրավական իրավագործությունների բովանդակությունը բացահայտված է **ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 163-րդ հոդվածում, համաձայն որի՝**

Տիրապետման իրավունքը գույքը փաստացի տիրապետելու իրավաբանորեն ապահովված հնարավորությունն է:

Օգտագործման իրավունքը գույքից դրա օգտակար բնական հատկությունները քաղելու, ինչպես նաև դրանից օգուտ ստանալու իրավաբանորեն ապահովված հնարավորությունն է: Օգուտը կարող է լինել եկամտի, պտուղների, աճի, ծնածի և այլ ձևերով:

Տնօրինման իրավունքը գույքի ճակատագիրը որոշելու իրավաբանորեն ապահովված հնարավորությունն է: Այլ կերպ կարելի է ասել, որ տնօրինման իրավունքը սեփականատիրոջ կողմից գույքի նկատմամբ իրավահարաբերություններ առաջացնելու, փոփոխելու կամ դադարեցնելու հնարավորությունն է:

Սեփականության իրավունքի սահմանադրաիրավական բովանդակությանն իր մի շարք որոշումներում անդադարձել է նաև ՀՀ սահմանադրական դատարանը: Մասնավորապես, իր 18.03.2008թ. թիվ ՍԴՈ-741 որոշմամբ ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրել է, որ ՀՀ Սահմանադրության 8 հոդվածի առաջին մասի համաձայն՝ «Հայաստանի Հանրապետությունում ճանաչվում և պաշտպանվում է սեփականության իրավունքը»: Սահմանադրական այս դրույթի իրացումը երաշխավորվում է ինչպես Սահմանադրության այլ հոդվածներով (31, 42.1., 43, 44 հոդվածներ, 83.5. հոդվածի 1-ին և 2-րդ կետեր, 89 հոդվածի 3-րդ կետ, 105 և 105.1. հոդվածներ), այնպես էլ Հայաստանի Հանրապետության մի շարք այլ իրավական ակտերով, որոնք կարգավորում են սեփականության իրավունքի իրացման հետ կապված հարաբերությունները, սահմանելով սեփականության իրավունքի սուբյեկտներին, սեփականության իրավունքի բովանդակությունը, սեփականության իրավունքի սահմանափակումների թույլատրելի շրջանակները, սեփականության իրավունքն իրականացնելու և պաշտպանելու պայմանները և կարգը, գույքի նկատմամբ իրավունքներ ունեցող այլ անձանց շահերի պաշտպանության մեխանիզմները:

2008թ. մարտի 18-ի թիվ ՍԴՈ-741 որոշման մեջ Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը նաև նշել է. «Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 31-րդ հոդվածով երաշխավորված՝ սեփականության իրավունքի պաշտպանությունը տրամադրվում է այն անձանց, ում սեփականության իրավունքն օրենքով սահմանված կարգով արդեն իսկ ճանաչված է, կամ ովքեր օրենքի ուժով ունեն սեփականության իրավունք ձեռք բերելու օրինական ակնկալիք»:

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը 2012թ. փետրվարի 24-ի ՍԴՈ-1009 որոշման մեջ արձանագրել է. «Սահմանադրության 31-րդ հոդվածի 1-ին մասի առաջին նախադասությամբ սեփականության իրավունքը ճանաչելով որպես յուրաքանչյուրի հիմնական իրավունք, բացահայտվում է այդ իրավունքի բովանդակությունը, այն է՝ իր սեփականությունը տիրապետելու, օգտագործելու, տնօրինելու և կտակելու իրավագործությունները՝ միաժամանակ որպես դրանց իրացման նախապայման սահմանելով **սեփականատիրոջ**

հայեցողությունը: Սահմանադրական այս նորմում «իր հայեցողությամբ» ձևակերպման շեշտադրմամբ սեփականության իրավունքի իրացման հիմքում դրվել է սեփականատիրոջ հստակ արտահայտված կամքը, վերջինս դիտարկվում է որպես սեփականության իրավունքի իրացման պարտադիր նախապայման, և սեփականության իրացման գործընթացում վճռորոշ դերակատարություն է հաղորդվում անձի կամաարտահայտությանը: Այս դրույթի բովանդակությունը հանգում է նրան, որ գույքային իրավունքների իրացումը պետք է իրականացվի սեփականության անձեռնմխելիության և պայմանագրային ազատության սկզբունքների հիման վրա, որոնք ենթադրում են, ի թիվս այլնի, **քաղաքացիաիրավական հարաբերությունների մասնակիցների կամքի ինքնավարություն և գույքային ինքնուրույնություն»:**

«Տնօրինման իրավագործությունը ենթադրում է սեփականատիրոջ կողմից օրենքով նախատեսված շրջանակներում ու կարգով գույքի նկատմամբ գործողություններ կատարելու կամ վերջինից ձեռնպահ մնալու միջոցով իր գույքի իրավական և փաստացի ճակատագիրը որոշելու իրավունք: Դա ոչ այլ ինչ է, քան հայեցողություն կամ, այլ կերպ՝ գույքի ճակատագրի հանդեպ ՀՀ Սահմանադրության 31-րդ հոդվածի առաջին մասում նախանշված շրջանակներում և օրենքով սահմանված պայմաններում ու կարգով **ինքնավար կամք դրսևորելու իրավունք:** Սակայն այդ կամքի ինքնավարությունը չի կարող անսահման լինել և չի կարող հակասել օրենքին, խախտել այլ անձանց իրավունքներն ու օրինական շահերը»³:

Վերը շարադրված դիրքորոշման վերլուծությունը ցույց է տալիս, որ վիճարկվող օրենքի դրույթի՝ իրավակիրառական պրակտիկայում տրված մեկնաբանությունն անմիջականորեն միջամտում է սեփականության իրավունքի՝ որպես սեփականության գույքային իրավունքի իրականացմանը, խաթարում վերջիններիս սեփականության անձեռնմխելիությունը: Նման միջամտությունն անձին զրկում է վարչական ակտով իրեն տրամադրված գույքն իր հայեցողությամբ, ազատ կամաարտահայտությամբ տիրապետելու, օգտագործելու, տնօրինելու սահմանադրական իրավագործություններից:

Օրենսդրական բացի սահմանադրականության կապակցությամբ ՀՀ Սահմանադրական դատարանն իր 14.09.2010թ. թիվ ՍԴՈ-914 որոշման մեջ արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումը.

«7. Օրենսդրական բացի սահմանադրականության հարց քննելիս սահմանադրական դատարանի խնդիրն է պարզել, թե տվյալ օրենսդրական բացը հանդիսանում է իրավակարգավորման թերությունը, թե՞ իրավաստեղծ մարմինը նման իրավակարգավորում սահմանելիս հաշվի է առել օրենսդրության մեջ համապատասխան իրավական երաշխիքների առկայությունը և ակնկալել այդ իրավական երաշխիքների հիման վրա համապատասխան իրավակիրառական պրակտիկայի ձևավորումը:

Սահմանադրական դատարանն իր՝ 2010թ. փետրվարի 5-ի ՍԴՈ-864 որոշման մեջ անդրադառնալով իրավունքի բացի հաղթահարման գործում սահմանադրական դատարանի և օրենսդիր մարմնի իրավասությունների հարաբերակցությանը՝ նշել է «Իրավունքի բացը հաղթահարելու հարցում օրենսդիր մարմնի և սահմանադրական դատարանի իրավասությունները դիտարկելով իշխանությունների տարանջատման սկզբունքի համապատասխան՝ սահմանադրական դատարանը հարկ է համարում

³ ՀՀ սահմանադրական դատարանի 24.02.2012թ. թիվ ՍԴՈ-1009 որոշում:

արձանագրել, որ բոլոր դեպքերում, երբ իրավունքի բացը պայմանավորված է իրավակարգավորման ոլորտում գործող կոնկրետ հանգամանքների առնչությամբ **նորմատիվ պարվիրանի բացակայությամբ**, ապա նման բացի հաղթահարումն օրենսդիր մարմնի իրավասության շրջանակներում է: Սահմանադրական դատարանը գործի քննության շրջանակներում անդրադառնում է օրենքի այս կամ այն բացի սահմանադրականությանը, եթե վիճարկվող նորմի բովանդակությամբ պայմանավորված իրավական անորոշությունն իրավակիրառական պրակտիկայում հանգեցնում է տվյալ նորմի այնպիսի մեկնաբանությանն ու կիրառմանը, որը խախտում է կամ կարող է խախտել կոնկրետ սահմանադրական իրավունք»:

Ձարգացնելով իր վերոհիշյալ իրավական դիրքորոշումները՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ օրենսդրական բացը կարող է հանդիսանալ սահմանադրական դատարանի քննության առարկա միայն այն դեպքում, երբ օրենսդրության մեջ առկա չեն այդ բացը լրացնելու այլ իրավական երաշխիքներ կամ օրենսդրության մեջ համապատասխան իրավական երաշխիքների առկայության պարագայում ձևավորված է հակասական իրավակիրառական պրակտիկա, կամ երբ առկա օրենսդրական բացը չի ապահովում այս կամ այն իրավունքի իրացման հնարավորությունը: Հակառակ պարագայում, իրավակարգավորման բացի սահմանադրականության հարցը ենթակա չէ սահմանադրական դատարանի քննությանը»:

Սույն սահմանադրական վեճի առարկա հանդիսացող նորմին տրված մեկնաբանությունը, իրավական որոշակիության սկզբունքի խախտման հետ միաժամանակ, չի ապահովում անձի սեփականության իրավունքի իրականացումը: Ուստի, այս պարագայում, կարծում ենք, իրավակարգավորման բացի սահմանադրականության հարցը ենթակա է սահմանադրական դատարանի քննությանը:

Ամփոփելով վերոգրյալը՝ Կենտրոնը գտնում է.

- «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 62-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանության համապատասխանությունը ՀՀ Սահմանադրությանը խնդրահարույց է:

Համակարգող՝

Լյուդվիկ Դավթյան